ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

««ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ (Կ-1182-03.11.2025-ԳԿ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	Առաջարկության հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերվում է առաջարկությունը	Առաջարկությունը (փոփոխությունը, լրացումը)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	ՀՀ ԱԺ պատգամավոր Սիսակ Գաբրիելյան	Հոդված 1-ին	1. «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» (այսուհետ՝ Օրենք) օրենքին հղում կատարելիս եւ Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս առաջարկում եմ պահպանել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 18-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջը, այն է՝ «Օրենքի լրիվ անվանումը հիշատակելիս հետեւյալ հաջորդականությամբ ներառվում են օրենքի վերնագիրը, օրենքի ընդունման տարին, ամիսը (տառերով), ամսաթիվը, հերթական համարը եւ «օրենք» բառը: Օրենքի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում նշվում է օրենքի վերնագիրը»:	Ընդունվել է	Ընդունվել է
2.			2. Օրենքի լրիվ անվանումը հիշատակելուց հետո առաջարկում եմ լրացնել «(այսուհետ՝ Օրենք)» բառերը՝ պահպանելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջը առ այն՝ «Նորմատիվ իրավական ակտում հաճախակի կիրառվող երկար արտահայտությունները նույն նորմատիվ իրավական ակտում կարող են սահմանվել կրճատ տարբերակով՝ իրավական ակտում առաջին իսկ կիրառումից հետո նախատեսելով կամ տվյալ արտահայտության սահմանումը, կամ փակագծերում նշելով կրճատ տարբերակը:», քանզի Նախագծի մյուս հոդվածներում «Ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի մասին» օրենքը հիշատակելիս այն օգտագործվում է կրճատ «Օրենք» տեսքով:	Ընդունվել է	Ընդունվել է
3.		Հոդված 3-րդ	3. Առաջարկում եմ Օրենքում սահմանել նաեւ սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման լիազորություն ունեցող մարմինը՝ ապահովելով նախատեսվող կարգավորումների լիարժեքությունը: Քանի որ նախատեսվում է Օրենքի 9-րդ հոդվածի 1-ին մասում լրացնել նոր «Ժ.10» կետ, ըստ որի՝ «Հայաստանի	Ընդունվել է և ամրագրվել են Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով:	Ընդունվել է

			Հանրապետության ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի պետական կառավարման լիազորված մարմինը՝ ( ) սահմանում է սպորտի կառավարման տեղեկատվական համակարգի վարման կարգը»:		
4.			4. Միևնույն ժամանակ՝ նախագծով առաջարկվում է Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել «լ» կետով՝ հետեւյալ բովանդակությամբ. «լ) սպորտի կառավարման տեղեկատվական համակարգ՝ տեղեկատվական տեխնոլոգիաների վրա հիմնված համակարգ, որը ստեղծված է սպորտային գործունեության կառավարման, կազմակերպման, վերլուծության եւ տվյալների պահպանման նպատակով: Այն ապահովում է տվյալների ավտոմատացված հավաքագրումը, մշակումը, պահպանումը:»: Սակայն, չի բացահայտվում, թե որ մարմինն է իրավասու ստեղծել վերոհիշյալ սպորտի կառավարման տեղեկատվական համակարգը, ուստի իրավական որոշակիությունով պայմանավորված՝ առաջարկում եմ դիտարկել նպատակահարմարությունը նախագծում սահմանել, թե որ մարմինն է լիազորված ստեղծելու հիշյալ համակարգը:	Ընդունվել է և ամրագրվել են Օրենքի նախագծի 3-րդ հոդվածով:	Ընդունվել է